

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

<Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան> ՊՈԱԿ-ի
<Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում>
մասնագիտության հիմնական կրթության հիմքով ավարտական կուրսի 2022 թվականի
պետական որակավորող հանձնաժողովի

2022 թվականի հունիսի 16-ին անցկացվեց <Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան> ՊՈԱԿ-ի <Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում> մասնագիտության գծով պետական ամփոփիչ ստուգում:

Պետական ամփոփիչ ստուգումը կազմակերպվեց և անցկացվեց հանձնաժողովի հետևյալ կազմով՝

նախագահ՝	Խաչիկ Սահակյան	- <Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն> հիմնադրամի տնօրեն, <Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան> հիմնադրամի Գյումրու մասնաճյուղի դասախոս
տեղակալ՝	Քնարիկ Ահարոնյան	- Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի տնօրեն
քարտուղար՝	Անուշ Մկրտչյան	- Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի փոխտնօրեն
անդամներ՝	Կարինե Գրիգորյան	- Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի փոխտնօրեն
	Հակոբ Մարմարյան	- Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի <Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում> մասնագիտության վարպետ

Հաստատությունում պետական ամփոփիչ ստուգումն անցկացվեց մասնագիտական մոդուլներից պետական քննության ձևով: Քննությանը մասնակցեց 11 շրջանավարտ:

Ուսումնական հաստատությունում <Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում> մասնագիտությամբ դասավանդող մասնագետներն ունեն մասնագիտական հարուստ գիտելիքներ և դասավանդման փորձ, պարբերաբար մասնակցել են մոդուլային ուսուցման վերապատրաստման դասընթացներին, պետական կրթական չափորոշի մշակման աշխատանքներին, ծանոթ են ռադիոէլեկտրոնային բնագավառի զարգացմանը, ոլորտում նոր տեխնոլոգիաների կիրառմանը, աշխատաշուկայի պահանջներին:

Պետական քննության հարցատոմսերում ներառված էին առանձին մասնագիտական մոդուլների հիմնական բովանդակությանը համապատասխանող հարցեր, որոնք բխում են

մասնագիտության պետական կրթական չափորոշյով սահմանված որակավորման բնութագրից:

Պետական ամփոփիչ ստուգման ընթացքում ցուցադրված էր ուսանողների երեք տարիների ընթացքում կատարած անհատական, բազմաբնույթ և բարդ գործնական աշխատանքները:

Քննության ընթացքում ուսանողները ներկայացրեցին մասնագիտական լավ տեսական գիտելիքներ, որոնք արտացոլվեցին վերջիններիս անհատական աշխատանքների կատարման քայլերի, օգտագործված գործիքների, պատրաստված սարքերի աշխատանքային սկզբունքների ներկայացման ընթացքում: Առանձնահատուկ տեսական գիտելիքներ, մասնագիտական կարողություններ և աշխատանքներ ներկայացրեցին ուսանողներ Հովհաննես Գրիգորյանը, Նարեկ Հակոբյանը և Արթուր Զուռնայանը:

Ցուցադրած աշխատանքները տարբեր էին. արտացոլված էր ուսանողների ստեղծագործ և հետազոտող միտքը: Ուսանողներն ըստ գծագրերի պատրաստել էին սարքերի տեխնիկական սայլկներ, գողել համապատասխան ռադիոդետալներ, համալարել սարքեր, ձևավորել և գունավորել մոդելների արտաքին տեսքը: Նրանք պատկերացնում էին ռադիոէլեկտրոնային միջոցների և սարքավորումների աշխատանքը և դրանց կառուցվածքը: Կարողանում էին տպասայլկի վրա առանձնացնել սարքավորումների հանգույցները, չափիչ-ստուգիչ սարքավորումների և գործիքների միջոցով հստորեն կատարում էին պարամետրերի չափումներ, ախտորոշում՝ սարքավորման անսարքությունները և առաջարկում նորոգման տարբեր եղանակներ:

Քննության մասնակից ուսանողներից Վարդան Գագիկի Վարդանյանը գնահատվեց <անբավարար>:

Պետական որակավորող հանձնաժողովը որոշեց 10 ուսանողի շնորհել <ռադիոմեխանիկ՝ ռադիոհեռուստատեսային սարքավորումների նորոգման և սպասարկման> որակավորում և հանձնել պետական նմուշի ավարտական փաստաթուղթ /դիպլոմ/:

Պետական որակավորող հանձնաժողովը որոշեց. <անբավարար> գնահատված ուսանող Վարդան Գագիկի Վարդանյանը՝ ըստ կարգի, ցանկության դեպքում, կարող է վերահանձնել պետական քննությունը 3 տարվա ընթացքում:

Մասնագետների պատրաստման հետագա կատարելագործման նպատակով ուսումնական հաստատությանը առաջարկվեց ուսուցման ընթացքում հաշվի առնել գործատուների պահանջները, ընդլայնել համագործակցությունը այլընտրանքային էներգիայի ստացման ոլորտի կազմակերպությունների հետ, շարունակել հետևել ռադիոէլեկտրոնիկայի բնագավառում կիրառվող տեխնոլոգիաների և ժամանակակից տեխնիկայի վերաբերյալ նորություններին, դրանք կիրառել ուսումնական գործընթացում:

Առաջարկվեց նաև համագործակցել էլեկտրոնային սարքավորումներ սպասարկող, նախագծող և կիրառող կազմակերպությունների հետ, մասնավորապես՝ ըստ վերջիններիս պահանջի ապահովել ուսանողների մասնագիտական գիտելիքների և գործնական կարողությունների համապատասխանությունը, որը կխթանի աշխատաշուկայում շրջանավարտների պահանջարկը:

Հանձնաժողովի նախագահ՝



Խաչիկ Սահակյան

16.06.2022թ.